Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 15-ի N 407 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական և ֆիզիկական անձանց (այսուհետ՝ սեփականատեր) սեփականության (օգտագործման) իրավունքով պատկանող հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի կադաստրի վարման կարգը և այդ գործընթացում ծագող հասարակական հարաբերությունները։

2. Սույն կարգով հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում հաշվառման ենթակա՝ գործարանային արտադրության բոլոր հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը՝ բացառությամբ կենցաղային նշանակություն ունեցող սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի։

3. Հայաստանի Հանրապետությունում հաշվառման ենթակա հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը հաշվառվում են կամավորության սկզբունքով՝ դրանց սեփականատերերի կողմից ներկայացված հայտի (իրավաբանական անձանց համար) կամ դիմումի (ֆիզիկական անձանց համար) հիման վրա։

4. Սույն կարգի իմաստով՝

1) ***հաստոցներ*** են համարվում նյութերի մշակման կամ իրերի արտադրման համար նախատեսված մեքենաները.

2) ***սարքավորումներ*** են համարվում նյութերի մշակման կամ իրերի արտադրման համար նախատեսված մեխանիզմների, սարքերի կամ հարմարանքների համախումբը.

3) ***բաղկացուցիչ մասեր*** են համարվում հաստոցների և սարքավորումների այն հիմնական մասերը, որոնք համարակալված են գործարանային տեխնիկական անձնագրային համարով։

II. ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

5. Հայաստանի Հանրապետությունում հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի կադաստրի վարման աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ հաշվառող մարմին)։

6. Հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի սեփականատերը գործարանային արտադրության հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը, սույն կարգով սահմանված դրույթների համաձայն, հաշվառման, վերահաշվառման կամ հաշվառումից հանման համար կարող է դիմել հաշվառող մարմին։

7. Սեփականատերը հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հաշվառման համար գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հաշվառող մարմին է ներկայացնում՝

1) հայտ կամ դիմում (N 2 հավելված, ձև N 1 կամ N 2).

2) արտադրող գործարանի կողմից տրված տեխնիկական անձնագրի կամ տեղեկամատյանի պատճենը.

3) սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

4) իրավաբանական անձինք՝ պետական գրանցման վկայականի, իսկ ֆիզիկական անձինք՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը։ Սույն կետի 3-րդ ենթակետում նշված փաստաթղթերն են հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ

մասերի նկատմամբ իրավունքի ծագման վերաբերյալ սահմանված կարգով կնքված պայմանագրերը, հաշիվ-ապրանքագրերը, դատական ակտերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր։

8. Հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը հաշվառող մարմինը հայտը (դիմումը) ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում՝

1) իրականացնում է հայտով կամ դիմումով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն.

2) փաստաթղթերով ներկայացված՝ հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի մասին տվյալների հիման վրա հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հաշվառման մատյանում (N 3 հավելված), ինչպես նաև համակարգչային ծրագրով կատարում է համապատասխան գրառում։ Յուրաքանչյուր միավոր հաստոցի, սարքավորման և դրանց բաղկացուցիչ մասի համար կատարվում է առանձին գրառում.

3) գրավոր կամ էլեկտրոնային եղանակով (եթե առկա են տեխնիկական հնարավորություններ) տեղեկատվություն է տրամադրում հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և գրավոր կամ էլեկտրոնային եղանակով սեփականատիրոջը տեղեկացնում է հաշվառման (հաշվառումից հանելու կամ վերահաշվառելու) մասին.

4) հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերին վերաբերող փաստաթղթերի բացակայության կամ դրանք սույն կարգի 7-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում գրավոր տեղեկացնում է սեփականատիրոջը՝ նշելով մերժման պատճառները։

9. Հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հաշվառման համար փաստաթղթերի բացակայության կամ դրանք սույն կարգի 7-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում սեփականատերը կարող է շտկել այն և ներկայացնել հաշվառող մարմնի լրացուցիչ քննարկմանը:

10. Հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը հաշվառված են համարվում, եթե դրանց վերաբերյալ հաշվառող մարմնի կողմից համապատասխան հաշվառում է կատարվել սույն կարգով հաստատված հաշվառման մատյանում:

11. Սեփականատերը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված տեղեկությունների համար:

12. Հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հաշվառման մերժման դեպքում սեփականատերն իրավունք ունի բողոքարկելու հաշվառող մարմնի գործողությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

III. ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ

13. Սեփականատիրոջ փոխվելու դեպքում նոր սեփականատերը հաստոցները, սարքավորումները և դրա բաղկացուցիչ մասերը վերահաշվառելու համար կարող է դիմել հաշվառող մարմին՝ ներկայացնելով սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

14. Հաշվառող մարմինը վերահաշվառումն իրականացնում է սույն կարգի 8-րդ կետում նշված ժամկետներում և կարգով:

15. Հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը հաշվառումից հանվում են սեփականատիրոջ հայտի կամ դիմումի հիման վրա: Հաշվառող մարմինը հաշվառման մատյանում, ինչպես նաև համակարգչային ծրագրով համապատասխան գրառում է կատարում հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը

հաշվառումից հանելու վերաբերյալ և գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 15-ի N 407 - Ն որոշման

Ձև N 1

_____
(կազմակերպության անվանումը)

Գտնվելու վայրը _____

Հեռախոսահամարը _____

_____
(հաշվառող մարմնի անվանումը)

_____
(հաշվառող մարմնի ղեկավարի անունը, ազգանունը)

ՀԱՅՏ

ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ (ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ) ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ, համաձայն հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի կադաստրի վարման կարգի, հաշվառել, վերահաշվառել, հաշվառումից հանել *(ընդգծել)* կից ցանկով (N 3 ձև) ներկայացված_____միավոր հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը:

Դրանց գտնվելու (շահագործման) վայրը_____

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Տնօրեն_____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____20 թ.

Հայտը հաշվառման մատյանում հաշվառված է _____ համարով:
Հաշվառող մարմնի պատասխանատու _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

10_0407

____ _____ 20 р.

Ձև N 2

_____
(հաշվառող մարմնի անվանումը)

_____
(հաշվառող մարմնի ղեկավարի անունը, ազգանունը)

Քաղաքացի_____
(անունը, ազգանունը)

Բնակության վայրը_____

_____

_____ հեռ._____

Անձնագիրը _____
(սերիան, համարը, երբ և ում կողմից է տրված)

Դ Ի Մ ՈՒ Մ

ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ (ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ) ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ, համաձայն հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի կադաստրի վարման կարգի, հաշվառել, վերահաշվառել, հաշվառումից հանել *(ընդգծել)* կից ցանկով (N 4 ձև) ներկայացված_____միավոր հաստոցները, սարքավորումները և դրանց բաղկացուցիչ մասերը:

Դրանց գտնվելու (շահագործման) վայրը_____

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Դիմող_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Դիմումը հաշվառման մատյանում հաշվառված է _____ համարով:
Հաշվառող մարմնի պատասխանատու_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 р.

Ձև N 3

Ց Ա Ն Կ

_____ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ N_____ՀԱՅՏՈՎ
(կազմակերպության անվանումը)

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ

NN ը/կ	Անվանումը	Մակնիշը	Արտադրման տարեթիվը	Արտադրող գործարանը	Գործարա-նային համարը	Տեխնիկական անձնագիրը (վկայականը)	Այլ տվյալներ	Ծանոթագրություն
1.								
2.								
3.								
4.								
5.								
6.								
7.								
8.								
9.								
10.								

_____ _____ _____
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

10_0407

____ _____20 р.

Ձև N 4

Ց Ա Ն Կ

_____ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ N_____ՀԱՅՏՈՎ
(անձի անունը, ազգանունը)

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ

NN ը/կ	Անվանումը	Մակնիշը	Արտադրման տարեթիվը	Արտադրող գործարանը	Գործարա-նային համարը	Տեխնիկական անձնագիրը (վկայականը)	Այլ տվյալներ	Ծանոթագրություն
1.								
2.								
3.								
4.								
5.								
6.								
7.								
8.								
9.								
10.								

Դիմող_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____20 թ.

10_0407

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 15-ի N 407 - Ն որոշման

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՍՏՈՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Հայտի (դիմումի) մուտքի համարը	Մուտքի ամիսը, ամսաթիվը	Սեփականատիրոջ		Հաստոցների, սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի				Հաշվառման մասին տեղեկություն		Հաշվառումից հանելու մասին հայտի (դիմումի)		Ծանոթագրություն
			անվանումը (ազգանունը, անունը)	գտնվելու վայրը (բնակության վայրը)	անվանումը	մակնիշը, տիպը	արտադրության տարեթիվը	գործարանային համարը	համարը	ամսաթիվը	մուտքի համարը	ամիսը ամսաթիվը	
1.													
2.													
3.													

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_0407